Ծ Ր Ա Գ Ի Ր

«Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 10 - ԱՄՅԱ

ԵՐԵՎԱՆ 2023

I. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1997թ. ապրիլի 29-ից 30-ը տեղի ունեցած հայկական մարզական կազմակերպությունների համաժողովում համաձայնություն ձեռք բերվեց ստեղծել Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե: «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 05.11.2001թ.-ին, պետական գրանցման համարն է՝ 211.171.00145:

1.1. Կազմակերպության նպատակները և խնդիրները

«Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպության նպատակներն են.

Կազմակերպության գործունեության առարկան ու նպատակը համահայկական խաղերի, ինչպես նաև՝ այլ մարզական միջոցառումների կազմակերպումն է, որոնք պետք է խթանեն համահայկական մարզական շարժումը:

«Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպության խնդիրներն են.

Կազմակերպությունը՝

1. խրախուսում է Հայաստանի, Արցախի և Սփյուռքի երիտասարդների միջև մարզական միջոցառումների կազմակերպումը,

2. համագործակցում է Հայաստանի Հանրապետության Կառավարության և այլ պետական կազմակերպությունների, ինչպես նաև՝ Հայաստանի, Արցախի և Սփյուռքի համապատասխան կազմակերպությունների հետ,
3. աջակցում և խրախուսում է մարզական էթիկայի զարգացմանը համահայկական մարզական շարժման մեջ,
4. պայքարում է համահայկական մարզական շարժումը քաղաքական նպատակներով օգտագործելու ցանկացած փորձի դեմ:

1.2. Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

«Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, իր կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

«Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպության աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.3. Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են.

Կազմակերպության ղեկավար մարմիններ են հանդիսանում՝

- Կազմակերպության Գլխավոր ասամբլեան որպես բարձրագույն մարմին.
- Կազմակերպության Գործադիր կոմիտեն:

1. Իշխան Սերժիկի Զաքարյան, «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպության նախագահ
2. «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպության գործադիր կոմիտեի կազմը՝

Նախագահ	Զաքարյան Իշխան	Երևան, ՀՀ
Փոխնախագահ	Բոյաջյան Ալբերտ	Լոս Անջելես, ԱՄՆ
Փոխնախագահ	Դերբեդրոսյան Ստեփան	Բեյրութ, Լիբանան
Փոխնախագահ	Շառոյան Ռոլանդ	Երևան, ՀՀ
Գործկոմի անդամ	Թեք Բիչակ Ալեն	Ստամբուլ, Թուրքիա

Գործկոմի անդամ	Բաղ Եփրեմ	Արևմտյան Հայաստան
Գործկոմի անդամ	Դուզյան Հերմինե	Մարսել, Ֆրանսիա
Գործկոմի անդամ	Թահմազյան Հարություն	Նիկոսիա, Կիպրոս
Գործկոմի անդամ	Շարոյան Ֆրիջ	Հալեպ, Սիրիա
Գործկոմի անդամ	Նաճարեան Միսաք	Բեյրութ, Լիբանան
Գործկոմի անդամ	Պաղտոյեան Սեպուհ	Վիեննա, Ավստրիա
Գործկոմի անդամ	Մոսիյան Արթուր	Ստեփանակերտ, ԼՂՀ
Գործկոմի անդամ	Բալայան Վարդան	Ստեփանակերտ, ԼՂՀ
Գործկոմի անդամ	Քիշեան Պողոս	Մոնրեալ, Կանադա
Գործկոմի անդամ	Թոքաթլյան Ավետիս	Բուենոս Այրես, Արգենտինա
Գործկոմի անդամ	Հալաճեան Պերճ	Ալեքսանդրիա, Եգիպտոս
Գործկոմի անդամ	Խալոյան Հենրիկ	Թեհրան, Իրան
Գործկոմի անդամ	Բայբուրդ Վան	Վրաստան, Թբիլիսի
Գործկոմի անդամ	Վարդան Սրմաքեշ	Շվեյցարիա
Գործկոմի անդամ	Սեմերջյան Շահան	Լիբանան
Գործկոմի անդամ	Վանեցյան Արթուր	Երևան, ՀՀ
Վերստուգիչ հանձնաժողովի նախագահ	Նաճարեան Սամ	Փարիզ, Ֆրանսիա

Մշտական աշխատողներ՝

1. Իշխան Զաքարյան, նախագահ
2. Գլխավոր քարտուղար, հաստիքը համալրման փուլում է
3. Խորհրդական, հաստիքը համալրման փուլում է
4. Օգնական, հաստիքը համալրման փուլում է
5. Հաշվապահ, հաստիքը համալրման փուլում է
6. Իրավաբան, հաստիքը համալրման փուլում է
7. Գործավար, հաստիքը համալրման փուլում է
8. Աննա Վարդանյան, Լրատվական պատասխանատու
9. Դավիթ Մամյան, Համակարգչային օպերատոր
10. Տնտեսվար, հաստիքը համալրման փուլում է
11. Վարորդ, հաստիքը համալրման փուլում է
12. Մասնագետ Համակարգող, այդ թվում՝

- Լիլիթ Ավետիսյան հասարակական հիմունքներով, Հարավային և հյուսիսային Ամերիկաների երկրների քաղաքային հանձնաժողովների հետ տարվող աշխատանքների համակարգող
- Եվրոպական երկրների քաղաքային հանձնաժողովների հետ տարվող աշխատանքների համակարգող, հաստիքը համալրման փուլում է
- Եփրեմ Մկրտչյան, ԱՊՀ երկրների քաղաքային հանձնաժողովների հետ տարվող աշխատանքների համակարգող
- Հայկանուշ Նիկոյան, Ասիական երկրների քաղաքային հանձնաժողովների հետ տարվող աշխատանքների համակարգող
- Վազգեն Հովհաննիսյան, Մերձավոր Արևելքի երկրների քաղաքային հանձնաժողովների հետ տարվող աշխատանքների համակարգող
- Գևորգ Գալստյան, ՀՀ և Արցախի քաղաքների հետ տարվող աշխատանքների համակարգող:

Համահայկական խաղերին իրենց մեծ աջակցությունն են մշտապես ցուցաբերում կամավորականները, որոնց մասնակցության շնորհիվ իրականացվում են բազմապիսի կազմակերպչական աշխատանքներ:

1.4. Կազմակերպության գործունեության ոլորտը

«Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպության գործունեության ոլորտներն են՝ սպորտային և մշակութային միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

2.1. Ծրագրի նպատակը

Հիմնվելով այն գաղափարի վրա, որ սպորտն ու մշակույթը սահմաններ չեն ճանաչում, Համահայկական խաղերի գլխավոր նպատակն է եղել և լինելու միավորել մայր Հայաստանում և աշխարհի տարբեր երկրներում ապրող հայկական ծագում ունեցող մարզիկներին՝ «Միասնություն սպորտով» կարգախոսի ներքո: Համահայկական ամառային, ձմեռային խաղերը անհատական և թիմային մարզաձևերի համալիր մրցումներ են, որոնց մասնակցում են տարբեր պետությունների քաղաքների մարզական պատվիրակությունները, մարզիկները, ովքեր այդ նպատակով ընտրվում են Սփյուռքում հայկական համայնքներ ունեցող քաղաքների համահայկական խաղերի համապատասխան հանձնաժողովների կողմից, իսկ Հայաստանում՝ քաղաքային համայնքային կառույցների կողմից: Համահայկական ամառային, ձմեռային խաղերն անց են կացվում այն մարզաձևերից, որոնք ընդգրկված են Կազմակերպության

գործկոմի կողմից հաստատված համապատասխան կանոնակարգերում:
Համահայկական խաղերի տարեգրությունը հաշվարկվում է՝ սկսած 1999 թվականի օգոստոսի 28-ից սեպտեմբերի 5-ը Երևանում կազմակերպված ամառային, և 2014 թվականի փետրվարի 2-13-ը Ծաղկաձորում կազմակերպված ձմեռային առաջին խաղերից: Եթե 1999 թվականին կազմակերպված առաջին խաղերին մասնացկել են 23 երկրների 63 քաղաքների 1141 մասնակիցներ՝ ընդամենը 7 մարզաձևերով, ապա 2019 թվականին կազմակերպված յոթերորդ խաղերին արդեն մասնացկում էին աշխարհի 35 երկրների 161 քաղաքների 5244 մասնակիցներ, որոնք մրցում էին 17 մարզաձևերի շրջանակներում:
Նման արդյունքների շրջանակներն էլ ավելի ընդլայնելու և աշխարհի բոլոր հայաբնակ քաղաքներում Համահայկական խաղերի հեղինակությունն ու կարևորությունը մեծացնելու նպատակով «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպությունը պատրաստակամ է հետագա բոլոր տարիներին անցկացվելիք ամառային և ձմեռային համահայկական խաղերը կազմակերպել և իրականացնել բարձր և պատշաճ մակարդակով: Նման մակարդակի խաղեր կազմակերպելու և անցկացնելու համար Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեն չպետք է ընդհատի իր բնականոն գործունեությունը տարիների ընթացքում՝ անկախ խաղերի փաստացի անցկացման կոնկրետ տարուց: Իր ուղղակի պարտականությունները ժամանակին և բարձր որակով կատարելու համար Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի ողջ անձնակազմի համար անհրաժեշտ է ապահովել գրասենյակային տարածք՝ իր համապատասխան գույքով:

2.2. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 10 տարիների համար կազմակերպության գործունեության կազմակերպման ֆինանսական աղբյուրներ են հանդիսանում.

- Բուն խաղերի կազմակերպման և անցկացման աշխատանքների ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել բարեգործական միջոցների հաշվին:

2.3. Ծրագրի իրականացման ժամկետները

Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել 10 տարվա ընթացքում՝ 2023-2032թթ.:

2.4. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 10 տարիներին «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպությունը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1-ին տարվա՝ 2023 թվականի ընթացքում «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպությունը պետք է կազմակերպի և իրականացնի

Համահայկական ութերորդ ամառային խաղերը, որի բացման արարողությունը անցկացվելու է Գյումրի քաղաքում:

2-րդ տարվա՝ 2024 թվականի ընթացքում «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպությունը պետք է կազմակերպի 2025 թվականին անցկացվելիք Համահայկական ձմեռային երկրորդ խաղերի կազմակերպչական աշխատանքները:

3-րդ տարվա՝ 2025 թվականի ընթացքում «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպությունը պետք է կազմակերպի և իրականացնի Համահայկական ձմեռային երկրորդ խաղերը:

4-րդ տարվա՝ 2026 թվականի ընթացքում «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպությունը պետք է կազմակերպի 2027 թվականին անցկացվելիք Համահայկական ամառային իններորդ խաղերի կազմակերպչական աշխատանքները:

5-րդ տարվա՝ 2027 թվականի ընթացքում «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպությունը պետք է կազմակերպի և իրականացնի Համահայկական իններորդ ամառային խաղերը:

6-րդ տարվա՝ 2028 թվականի ընթացքում «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպությունը պետք է կազմակերպի 2029 թվականին անցկացվելիք Համահայկական ձմեռային երրորդ խաղերի կազմակերպչական աշխատանքները:

7-րդ տարվա՝ 2029 թվականի ընթացքում «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպությունը պետք է կազմակերպի և իրականացնի Համահայկական ձմեռային երրորդ խաղերը:

8-րդ տարվա՝ 2030 թվականի ընթացքում «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպությունը պետք է կազմակերպի 2031 թվականին անցկացվելիք Համահայկական ամառային տասներորդ խաղերի կազմակերպչական աշխատանքները:

9-րդ տարվա՝ 2031 թվականի ընթացքում «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպությունը պետք է կազմակերպի և իրականացնի Համահայկական տասներորդ ամառային խաղերը:

10-րդ տարվա՝ 2032 թվականի ընթացքում «Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե» հասարակական կազմակերպությունը պետք է կազմակերպի 2032 թվականին անցկացվելիք Համահայկական ձմեռային չորրորդ խաղերի կազմակերպչական աշխատանքները:

2.5. Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքը

Սույն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ արդյունքում կկազմակերպվեն և կանցկացվեն 2023 ամառային ութերորդ, 2027թ. ամառային իններորդ, 2031թ . ամառային տասներորդ, 2025թ . ձմեռային երկրորդ և 2029թ . ձմեռային երրորդ խաղերը: Այս խաղերի կազմակերպումն ու անցկացումը կապահովի «Միասնություն սպորտով» կարգախոսի ներքո աշխարհի տարբեր երկրներում ապրող հայկական ծագում ունեցող մարզիկների և պատվիրակությունների այցելությունը հայրենիք, նրանց մասնակցությունը խաղերին, ծանոթությունը մայր հայրենիքի կարևոր մշակութային օջախներին և կոթողներին:

Այս ծրագրի շրջանակներում շահառու են հանդիսանում խաղերին մասնակից շուրջ 10,000 մարզիկներ և պատվիրակության անդամներ: Բացի այդ, խաղերի անցկացման ընթացքում խաղերի շահառու են բազմաթիվ սփյուռքի գաղթօջախներ, կազմակերպություններ և անձինք, որոնք անմիջական մասնակցություն ունեն խաղերի կազմակերպման, խաղերի մասնակիցներին տարբեր ոլորտներում սպասարկման և մշակութային միջոցառումների անցկացման գործում: